

Հրատարակչատան կողմէ

Գիրքը կը բովանդակէ պոլսահայ, յետագային՝ ֆրանսաբնակ եւ հայաստանաբնակ խմբագիր ու դերասան Երուանդ Թօլայեանի (Կավոօշ, 1883–1940?) յուշագրութիւնը: Թօլայեանի յուշագրութեան ինքնագիրը, գրուած 1936-1937 թթ. Երեւան եւ ամփոփուած 12 մատեաններու մէջ (700 էջ), կը պահպանուի Երեւանի «Եղիշէ Չարենց» գրականութեան եւ արուեստի թանգարանը: Յուշագրութիւնը արեւմտահայերէն է, սակայն կան նաեւ արեւելահայերէնի որոշ քերականական ձեւեր: Շարադրուած է 1922-1940 թուականներուն Սովետական Հայաստանի մէջ կիրառուած նոր ուղղագրութեամբ, գոր փոխած ենք դասականի՝ կատարելով որոշ շտկումներ (օրինակ, բազմաձեւ գրութեամբ բառերը միօրինակ դարձուցած ենք): Կատարուած են նաեւ ուղղագրական որոշ շտկումներ: Առաջին անգամ ամբողջութեամբ տպագրուող փաստալից այս յուշագրութիւնը հիմնականին կը ներկայացնէ 20-րդ դարու առաջին քառորդին Պոլսոյ հայկական եւ թրքական պատմամշակութային կեանքը՝ առանցքին ունենալով թատերական ասպարէզը: Հատորն ունի յառաջաբան, ծանօթագրութիւններ:

Դերասաններու՝ գիրքին մէջ տեղ գտած շիրիմներու լուսանկարներուն հեղինակն է լուսանկարիչ **Պերճ Արապեան**: Պատմական բացիկներն ու դերասաններու լուսանկարները իր հաւաքածոյէն ազնուաբար տրամադրած է հաւաքորդ **Եղեմ Չուպուքճուօղլու**: Լուսանկարներ տրամադրած են նաեւ դերասան ու խմբագիր **ժիրայր Չուլաքեան** (Փարիզ), պատմաբան **Նեսիմ Օվատիա Իգրաիլ**: Կարգ մը լուսանկարներ ալ ապահոված ենք մամուլէն ու տարբեր կայքէջերէ:

Հրատարակուած են ու խմբագրուած են վերաբերեալ

ԿԱՎՈՇ-ՆԱՄԷ

ԹԱՏԵՐԱ-ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

(Ինքնակենսագրականով խառնուած)

1900-1935

Արաս Հրատարակչու թիւն
Aras Yayıncılık

İstiklal Caddesi, Hıdivyal Palas 231/Z

34430 Tünel, Beyoğlu-İstanbul

Tel: (0212) 252 65 18 - 243 06 02

Fax: (0212) 252 6519

www.arasyayincilik.com

info@arasyayincilik.com

Sertifika No. 10728

ARAS - ԱՐԱՍ 227

ԿԱՎՈՇ-ՆԱՄԷ
ԵՐՈՒԱՆԻ ԹՕԼԱՅԵԱՆ

Հրատարակութեան պատրաստեց՝

Սեւան Տէյիւրմենճեան

Կողքը պատրաստեց՝

Մելիսա Արսէնեան

Կողքի լուսանկար՝

Օսմանեան Տրամի ընկերութիւնը (1914)

Ոտքի (ձախէն աջ)՝ յուշարար Մուհամմետ, Օգսէն Շահինեան, Ֆիմի,

Գրիգոր Զօպանեան, Հուլիուսի: Նստողներ (ձախէն աջ)՝ Երուանդ
Թօլայեան, Վահան Շահինեան, Մարտիրոս Մնակեան, Ազնիւ Մնակեան,

Հասան Ճեւատ: Գետնին (ձախէն աջ)՝ Ֆիմիին քոյրը՝ Նոլարը,

Նուպար Շահինեան, Աղաւնի Նեճիպ:

(Յակոբ Այվազի թողօն, «Հրանդ Տինք» Հիմնարկ)

Տպագրութիւն

Սենա Օֆսեթ

Փետրուար 2019, Ստանպուլ

ISBN 9786052100370

ԿԱՎՈՇ-ՆԱՄԷ

ԹԱՏԵՐԱ-ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

(Ինքնակենսագրականով խառնուած)

1900-1935

ԵՐՈՒԱՆԻ ԹՕԱՅԵԱՆ

(ԿԱՎՈՇ)

Աշխատասիրութեամբ

ՀԵՆՐԻԿ ԵՒ ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆՆԵՐՈՒ




**ԳԻՐՔԸ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ
ՄԵԿԵՆԱՍՈՒԹԵԱՄԲ**

ՏԻԱՐ ՍԱՐԳԻՍ ՔԻԻԼԷԿԵՉԻ՝

Ի ՅԻՇԱՏԱԿ ԻՐ ԿՆՈՋ՝

**ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԷՄՄԱ ՔԻԻԼԷԿԵՉԻ
(1954-2018)**



ԵՐՈՒԱՆԻ ԹՕՒԱՅԵԱՆ
(1883-1940?)

ԵՐՈՒԱՆԻ ԹՕՒԱՅԵԱՆ

Երգիծաբան, խմբագիր եւ դերասան Երուանդ Թօլայեան (Կալուսոյ) ծնած է 1883-ին, Պոլիս, Ֆերիտիէ թաղը, Էյրի փողոց, որպէս զաւակը անուանի խմբագիր, թարգմանիչ, դերասան, հրատարակիչ Յովհաննէս Թօլայեանի (1856-1936): Կրթութիւնը ստացած է Սազըզաղաճի Լուսաւորչեան եւ Ղալաթիոյ Սեն-Պընուա վարժարաններուն մէջ: 20-րդ դարու սկիզբէն պոլսահայ մամուլին մէջ տպագրած է երգիծական երկեր:

1908-1926 թթ., որոշ ընդհատումներով Պոլսոյ, կարճ միջոց մը Գահիրէի եւ 1927-1936 թթ. Փարիզի մէջ հրատարակած է «Կալուսոյ» երգիծական պարբերականը: Խմբագրած է նաեւ այլ պարբերաթերթեր, թղթակցած՝ Պոլիս տպագրուող կարգ մը հրատարակութիւններու:

Գրական-խմբագրական աշխատանքի զուգահեռ Թօլայեան մասնակցութիւն բերած է նաեւ թատերական շարժումին: Պոլսոյ մէջ մաս կազմած է Մարտիրոս Մնակեանի թատերախումբին: Բեմ ելած է նաեւ Փարիզի մէջ, ուր գացած էր 1926-ին, Պոլիսէն հեռանալէ ետք: Մասնակցած է ո՛չ միայն հայերէն, այլ նաեւ թըրքերէն ներկայացումներու («Արուեստը լեզու չունի», կ'ըսէր): 1915-ին տարագրուած է արեւմտահայ միւս մտաւորականներուն հետ: Նկարահանուած է թրքական շարժարուեստի հիմնադիր Մուհսին Էրթուղրուլի «Լէպլէպիճի Հօր-հօր» (1923) եւ «Չարաճրճի աղջիկները» («Սէօզտէ քըզլար») (1924) ժապաւէններուն մէջ:

1936 թ. ներգաղթած է Խորհրդային Հայաստան, ուր ալ գրած է այս մեծարժէք յուշագրութիւնը: 1937 թ. կամ աւելի ուշ կնքած է իր մահականացուն՝ իբրեւ զոհ սթալինեան անհատի պաշտամունքի հետեւանքով ի գործ դրուած բռնութիւններու:

Հրատարակուած գիրքերն են՝ «Իտէպլին ետեւէն (Երգիծավէպ Բերայի բարբերէն)» (Պոլիս, 1910), «Կալուսոյ՝ զինուոր: Զինուորական յիշատակներ: Խըչլայի կեանքէն» (Պոլիս, 1910), «Կալուսոյին գատիկը» (Պոլիս, 1919) եւլն.:

ԿՈԹՈՂԱՅԻՆ, ԱՆՆԱԽԱԴԷՊ ՄԻ ՍԿԶԲՆԱՂԲԻԻՐ

ԱՐԾՈՒԻ ԲԱՆԶԻՆԵԱՆ

«Ազգերը կ'ապրին, եթէ չմոռնան իրանց հինները,
նախնիքները, իրենց մշակոյթին համար աշխատողները,
իրենց յառաջադիմութեան օգնողները»:
Երուանդ Թօլայեան

Հայ թատերական արուեստի պատմութեանը նուիրուած աշխատութիւններում որպէս սկզբնաղբիւր յաճախ է յիշատակուել Երուանդ Թօլայեանի անունը: Հայ ուսումնասիրողները մշտապէս օգտուել են նրա՝ ասես առատութեան եղջիւրից յորդացող ընդարձակ տեղեկատուութիւնից¹, սակայն բուն տեքստը ցայսօր մնացել է անտիպ:

Առհասարակ, երգիծաբան, խմբագիր եւ դերասան Երուանդ Թօլայեանը (1883–1937), նոյն ինքը՝ Կալուօշը, ուրոյն հետաքրքրութիւն է ներկայացնում որպէս անցեալի հայ մշակոյթի ամենահեռանդուն գործիչներից մէկը: Ապրած լինելով քաղաքական վայրիվերումներով լի ժամանակաշրջանում՝ Երուանդ Թօլայեանը իր մաշկի վրայ է ճաշակել ժամանակի ծանր փորձութիւնները՝ նախ համիդեան բռնապետութիւնը, 1915-ի աքսորը, տարագրութիւնը եւ ի վերջոյ՝ ստալինեան բռնապետութիւնը, որի գոհն է դարձել՝ մահկանացուն կնքելով բանտում կամ սիբիրեան աքսորավայրում:

Ի ծնէ պոլսեցի, Կոստանդնուպոլսի հայ եւ թուրք մշակութային կեանքի անխոնջ մասնակից եւ ականատես Երուանդ Թօլայեանն ասես շարունակել է ընտանեկան աւանդոյթը: Նրա հայրը՝ Յով-

1 Մենք եւս օգտուել ենք այս յուշագրքից՝ պարուհի Արմէն Օհանեանի կենսագրութիւնը գրելիս (տե՛ս Արծուի Բախչինեան, Վարդան Մատթէոսեան, Շամախեցի պարուհի. Արմէն Օհանեանի կեանքը եւ գործը, Երեւան, 2007, էջ 82-85):

Հաննէս Թօլայեանը (1856-1936), Հանդէս է եկել Պետրոս Մաղաքեանի Օրթագիւղի թատրոնի ներկայացումներում որպէս դերասան, ապա աշխատել է Կարապետ Փանոսեանի «Մանգումէի էֆքեար» Հայատառ թուրքերէն օրաթերթում, նախ որպէս աշխատակից, ապա՝ խմբագիր: Նրա որդի Երուանդն էլ վաղ տարիքից նետուել է լրագրական ասպարէզ, երգիծական ստեղծագործութիւններով Հանդէս գալով «Ծաղիկ», «Լոյս» եւ այլ պարբերականներում: Իր յուշերում Թօլայեանը հումորով վկայել է, որ ինքը լուրջ գրողի յաւակնութիւններ է ունեցել՝ գրելով յուզիչ նորավէպեր եւ բանաստեղծութիւններ: Սակայն պատահակա՛նութիւնը նրան դարձրել է երգիծաբան: «Լոյս» գաւեշտաթերթում հրատարակած նրա մի երգիծական մանրապատումը բարձր գնահատանքի է արժանացել («Նոր Պարոնեան մը կայ պահուած անոր ետին, Հայ Սօլիէր մը», ասել է խմբագիրը), նաեւ լաւ վարձատրութիւնը խթանել է, որպէսզի նա շարունակի աշխատակցել երգիծական գրութիւններով:

Արեւմտահայ մամուլը մօտ երեսուն տարի գոյատեւել է օսմանեան գրաքննութեան ճիրաններում: Սահմանադրութեան պարգեւած առաջին բարիքը եղաւ գրաքննութեան վերացումը, որից, անշուշտ, առաջին հերթին շահեցին մամուլը, գրականութիւնը եւ թատրոնը: «...կարող էինք մեր ուզած փիլէսը խաղալ առանց գրաքննութեան... Ահա՛ դերասանին հանած առաջին բարոյականը ու տեսած արդիւնքը այս քաղաքական մեծ վերիվայրումէն», գոհունակութեամբ արձանագրել է Թօլայեանը: 1908-ի յունիսից նա ձեռնամուխ է եղել «Կավոօջ» երգիծաթերթի հրատարակմանը, եւ, իր ասելով, կատակի համար ստեղծուած «Կավոօջը» լուրջ ձեռնարկի ձեւ է առել: Իսկապէս, այն զուտ ժամանցային հրատարակութիւն չէ, այլ հարուստ նիւթ է պարունակում ժամանակի հայ քաղաքական, հասարակական եւ մշակութային (յատկապէս՝ թատերական) իրականութեան վերաբերեալ: Պատերազմի տարիներին Թօլայեանն ընդհատել է «Կավոօջի» հրատարակութիւնը, այնուհետեւ վերսկսել 1925-ին դարձեալ Պոլսում, որոշ ժամանակ՝ Եգիպտոսում, ապա կրկին Պոլսում, իսկ 1926-ից ի վեր՝ Փարիզում: Զուգահեռ զբաղուել է նաեւ նոյնանուն երգիծական տարեգրքերի հրատարակմամբ: Հիմնական յօդուածագիրը եղել է ինքը՝ իր անունից բացի գոր-

ծածելով տարբեր ծածկանուններ (ընդհանուր առմամբ հայ մամուլում հանդես է եկել 21 ծածկանուններով)²: 1936-ի մայիսի առաջին շաբաթը Փարիզում հրատարակել է «Կավուօշի» ամենավերջին թիւը, որից յետոյ ներգաղթել է հայրենիք, իր վկայութեամբ՝ միանալով Կոմիտաս վարդապետի աճիւնը Հայաստան բերողների խմբին:

Գրական-խմբագրական գործունէութեանը զուգահեռ Թօլայեանը զբաղուել է թատերական աշխատանքով, նախ՝ Պոլսում, ապա՝ Փարիզում: Մասնակցել է ինչպէս հայերէն, այնպէս էլ թուրքերէն ներկայացումների («Արուեստը լեզու չունի», ասել է նա): Նկարահանուել է թուրքական կինոյի հիմնադիր Մուհսին Էրթուղրուլի «Լէպլէպիճի Հօր-հօր» (1923) եւ «Չարաճճիները» (1924) ֆիլմերում:

1936-ին Երուսաղէմ Թօլայեանը խորհրդային Հայաստանում է, կնոջ՝ փարիզահայ բեմի դերասանուհի Անահիտ Դատաւորեանի եւ այլ արուեստագէտների հետ³: Այստեղից նա թղթակցութիւններ է ուղարկել արտասահմանի բոլշեւիկեան թերթերին, որոնցից էլ արտատպել են ռամկավար թերթերը՝ երբեմն արժանանալով դաշնակցական մամուլի հեգնանքին: Չափազանցուած ոգեւորութեամբ է գրել: Օրինակ, իր մի գրութեան մէջ նշել է, թէ «Չեմ կարծեր, թէ աշխարհի վրայ գտնուել ուրիշ երկիր մը, ուր այսչափ շատ երեխայ ըլլայ: Դպրոցները լեցուն են, լեփ-լեցուն, փողոցներն ալ: Բոլոր կիները յղի են: Եւ հիմա վիժումի դէմ եղած վերջին օրէնքէն ետք տես, դեռ ինչ պիտի ըլլայ»⁴: Խանդավառուած, հաւատալով նոր կարգերին՝ նա սկսել է գովերգել ստալինեան վարչակարգը, սակայն, շատ չանցած՝ դարձել է նոյն այդ վարչակարգի գոհը: Պատճառը: Ահա ինչ է գրել Աւետիք Իսահակեանի որդին՝ Վիգէն Իսահակեանն իր յիշո-

2 Տե՛ս Բ. Յովակիմեան, *Հայոց ծածկանունների բառարան*, Երեւան, 2005, էջ 611:

3 Դերասան Մանուէլ Մարութեանը Անահիտ Դատաւորեանի մասին գրել է. «Չգիտեմ ինչո՞ւ ամուսնացաւ երգիծաբան Կավուօշի հետ: Արդեօք նիւթակա՞նը: Եւ կամ թէ՛ որովհետեւ Կավուօշը մեկնում էր Հայաստան, որպէսզի ինքն էլ դնայ հայրենիք եւ նուիրուի հայ բեմին» (տե՛ս Մանուէլ Մարութեան, *Բեմական ընկերներս*, Անթիլիաս, 1986, էջ 83):

4 Տե՛ս Վ. Մասիսեան, *Ե. Թօլայեան եւ Զանգեզուրի ոչխարները*, «Հայրենիք», Պոսթըն, 14 օգոստոս 1936:

ղուծիւններում. «Մի տխուր թիւրիմացութիւն պատմեմ, որ կարող էր տեղի չունենալ, եթէ գտնուէինք մի նորմալ երկրում: Ներգաղթի քարաւանի հետ, «Սինայ» նաւով Երեւան էր եկել նաեւ մեր բոլորիս ծանօթ թոլոն: Թոլոն, Երուսաղէմի թոլոյեանը (sic), Սփիւռքում հանրածանօթ եւ սիրուած երգիծաբան էր: Թոլոյեանը նախ Կ. Պոլսում, յետոյ Փարիզում հրատարակում էր մի երգիծական շաբաթաթերթ՝ «Գալրոշ» (sic) կոչուած, եւ նոյն անունով մի տարեգիրք: Սփիւռքահայութեան մէջ այն շատ տարածուած էր: Նա սփիւռքահայ կեանքի մի ձգողական կէտերից էր: Թոլոյեանը Փարիզում լաւ վաստակում էր եւ յարմարաւէտ կեանք էր վայելում: Սիրային կապերով կապուած էր դերասանուհի Անահիտ Ասջեանի (իրականում՝ Դատաւորեան - Ա. Բ.) հետ: Դժբախտաբար, օրիորդի գլխում մի միտք է ծագում, որոշում է քարաւանի հետ մեկնել Հայաստան, որպէսզի իր թատերական կարիէրան շարունակի ունայնութիւն ունայնութեանց: Խեղճ մարդս, Թոլոն, չուզեցաւ թափանցել իր «Դուլսինայից», ներողութիւն, Անահիտից, միանում է նրան եւ միասին գալիս են Երեւան: Ընդունուած են Պետական թատրոն: Թոլոյեանն էլ էր օժտուած դերասանական ձիրքով, կոմիկ դերեր լաւ էր կատարում:

Երեւանում Թոլոյեանն առաջարկում է վերահրատարակել իր «Գալրոշ» թերթը: Խորհրդային Հայաստանում երգիծանք, ինչ-որ մի «Գալրոշ», ինչ-որ մի սփիւռքահայ խմբագիր, իհարկէ մերժում են: Որոշ ժամանակ յետոյ Թոլոյեանի գլխում մի նոր, աւելի խիզախ ծրագիր է ծագում: Խօսեց հօրս հետ, հայրս խորհուրդ չտուեց: Չլսեց Թոլոյեանը: Առաջարկը հետեւեալն էր: Թոլոյեանը դիմում է Հայաստանի կառավարութեանը, որպէսզի թոյլ տան վերագառնալ Փարիզ, այնտեղ շարունակի հրատարակել իր թերթը նոր անունով՝ «Կարմիր Գալրոշ», եւ սովետամէտ կողմնորոշումով պրոպագանդի մեր Խորհրդային Հայաստանի նուաճումները: Վատ առաջարկ չէր, կային այդպիսիք ուսուցիչներ, ֆրանսերէն: Նորմալ երկրում կամ կ'ընդունուէր, կամ կը մերժուէր: Պատասխանը չուղացաւ: Բանտարկեցին, արսուրեցին Թոլոյեանին. այլեւս չտեսանք մեր դժբախտ Գալրոշին, որի անունը սակայն իր ուրոյն տեղն ունի հայ մամուլի պատմութեան մէջ»⁵:

5 Վ. Իսահակեան, *Փարիզ. Բոչար. Անցած օրեր*, Երեւան, 2006, էջ 251-252:

Ստալինեան բռնատիրութեան շրջանին իր կրած հալածանքների մասին որոշ գաղափար է տալիս հետեւեալ լուրը, թէ «Թատերական ճակատին վրայ, իբրեւ հակայեղափոխական սրիկաներ վտարուած են Մկրտիչ Զանան, Ե. Թոլաեան (Կավոռ) եւ ուրիշներ»⁶: Հալածանքները հասնելու էին մինչեւ... մահ: Վահան Հովիւեանի վկայութիւնը մի որոշ պատկերացում տալիս է Կավոռի կեանքի վերջին օրերի մասին. «Վարդգէս Վարդերեսեանը 1936-ին Յրանսայից ներգաղթած եւ բաւական ժամանակ չարչարուած չեկայի ստորերկրեայ նկուղներու մէջ՝ Երուանդ Թօլայեանի հետ միատեղ: ... իր բախտակից տարաբախտ Կավոռը յաւերժ կորսուաւ, որու հետքն իսկ չկայ»⁷: Դժբախտ Կավոռի մահուան թուականը ընդունուած է համարել 1937-ը⁸: Սակայն 1940 թուականին պոլսահայ «Ժամանակ» թերթում (18 հոկտեմբեր) տեղ է գտել մի նիւթ, որը վկայում է. «Ինչպէս յայտնի է, Երուանդ Թօլայեան կամ հանրածանօթ Կավոռը ասկէ քանի մը տարի առաջ կարաւանի մը հետ Հայաստան գացած էր հոն հաստատուելու համար: Վերջին տարիներս գրեթէ որեւէ լուր չկար իրմէ եւ զանազան տարածայնութիւններ շրջան կ'ընէին իր մասին: Ոմանք նոյնիսկ մեռած կը նկատէին զայն: Արդ, յանկարծ Կավոռին ողջ-առողջ ըլլալուն լուրը կը հասնի իր կողմէն, Իսթանպուլ բարեկամի մը զրկած նամակով: Այս նամակը հրատարակուած է այս շաբթուան «Կավոռ» երգիծաթերթին մէջ»⁹:

Բարեբախտաբար, Խորհրդային Հայաստանում Թօլայեանը հասցրեց գրի առնել եւ սերունդներին ի պահ տալ իր Թատերական եւ խմբագրական յուշերը: Իրականում դրանք շատ աւելին են, քան մի անհատի անձնական յիշողութիւնները: Թօլայեանի գիրքը 19-րդ դարի վերջի, 20-րդ դարի սկզբի Կոստանդնուպոլիս քաղաքի մի իւրատեսակ հանրագիտարան է՝ նրա սոցիալական եւ մշակութային կեանքի հարուստ խճանկարը, որ ամբարում է

6 Լուրեր Հայաստանէն, «Արագ», Պուքրէշ, 14.11.1937

7 Վահան Հովիւեան, Դեր Զորից մինչեւ Սիբիր կամ կեանքի ելեւէջներ, 1904-64, Երեւան, 2018, էջ 188:

8 Տէն Գառնիկ Ստեփանեան, Կենսագրական բառարան (Հայ մշակոյթի գործիչներ), հատոր Ա, Երեւան, 1973, էջ 366:

9 «Վերածնունդ», Թեհրան, 20.11.1940:

անցած-գնացած ժամանակների պատմութեան բազմաթիւ դրուագներ՝ իր մեծ ու փոքր անուններով, տիրող վարքութեամբով, ազգամիջեան յարաբերութիւններով, խոր եւ մակերեսային շերտերով: Իր յուշերում Թօլայեանը գրեթէ չի խօսում իր անձնական կեանքից, իր սուբյեկտիւ տպաւորութիւններից, այլ հանդէս է գալիս որպէս անցեալի կարեւոր քաղաքական եւ մշակութային երեւոյթների եւ այլոց կեանքի ու գործունէութեան մի համեստ արձանագրող: Անգամ չի մանրամասնում 1915-ին հայ մտաւորականութեան հետ իր աքսորը եւ փրկուելը:

Հայ թատրոնի պատմութիւնը, որ յետագայ տասնամեակներին պիտի գրուէր թատրոնի պատմաբանների, բանասէրների, թատերագէտների ջանքերի շնորհիւ, այս յուշագրքում գրեթէ ամբողջովին կայ իր առաջնային եւ երկրորդական դէմքերով, դերասան-դերասանուհիներով, բեմադրիչներով, խաղացանկով, թատերադիրներով, հին ու նոր ճաշակներով: Թօլայեանն անձամբ չի տեսել Պետրոս Ադամեանին, սակայն վերջինիս ներկայութիւնն առկայ է, քանի որ այդ ժամանակաշրջանում դերասան փափագել դառնալ ցանկացող ամէն մի հայ երիտասարդ «աղամեանցու» էր: Չի հանդիպել նաեւ Տիգրան Չուխաճեանին, սակայն բազմիցս լսած լինելով նրա կեանքի մանրամասները ու նաեւ անձամբ հանդէս եկած լինելով նրա օպերետներում (յատկապէս «Լէպլէպլիճի»ում), Թօլայեանը տուել է հայ անդրանիկ պրոֆեսիոնալ կոմպոզիտորներից մէկի դիմանկարն այնպէս, կարծես նրա ժամանակակից մտերիմը եղած լինէր: Այլեւս չենք ասում 19-րդ դարի վերջի եւ 20-րդ դարի առաջին քառորդի հայ թատրոնի առաջին եւ երկրորդական դէմքերին, թուրք թատրոնին ծառայած հայ դերասանների մասին, որոնք գրեթէ ամէնն էլ ներկայ են՝ առաւել կամ պակաս կենդանութեամբ: Չեն մոռացուել նաեւ մամուլի գործիչները՝ հայ ազգի այդ իւրօրինակ հերոսները («Հայերէն թերթ հրատարակելը այն ատենները հերոսութիւն էր, եւ պէտք է ընդունել, որ միշտ ալ հերոսներ ունեցած ենք մեր մէջ»):

Ստեղծագործական եւ մարդկային բազմակողմանի նկարագրութեամբ առանձնանում է յատկապէս Թօլայեանի այնքան մանրամասն եւ տպաւորիչ պատկերած դերասանապետ Մար-

տիրոս Մնակեանի կերպարը՝ նրա ստեղծագործական հաւատամքից, աշխատելու մեթոդներից սկսած մինչեւ կեանքի վերջը, յուզարկաւորութեան նկարագրութիւնը: Թօլայեանի համար յիրաւի հարազատ կերպար է իր դերասանական կնքահայր Մնակեանը, որը թատրոնն իրաւամբ համարում էր դպրոց, որի տնօրէնն ինքն էր, դերասանները վարժապետներ էին, իսկ հանդիսականը երկսեռ աշակերտութիւնն էր: Կեանքի մէջ բարեհամբոյր այդ մարդը կատարեալ բռնակալ էր փորձերի ժամանակ, որի համար փորձը համարժէք էր ներկայացման: Մեծ տեղ չգրաւող, սակայն յուզիչ է Կոմիտասի կերպարը, որի հայ երգը Թօլայեանը համարել է օսմանեան սահմանադրութեան բարիքներից մէկը, քանի որ մինչ Կոմիտասը թրքահայը իբր հայկական երգ լսել էր միմիայն եւրոպական եղանակների վրայ յարմարեցուած անարժէք գործեր: Թօլայեանը յիշատակում է նաեւ Վահրամ Փափազեանի առաջին քայլերը բեմական ասպարէզում, հպարտութեամբ նշելով, որ ինքը մարգարէացել է՝ մենախօսութիւն արտասանող պատանու համար մեծ ապագայ գուշակելով:

Թօլայեանի սոյն աշխատութիւնը մի աննախադէպ, մեծարժէք աղբիւր է յատկապէս թուրքական թատրոնի պատմութեան համար, մասնաւորապէս՝ համիդեան շրջանի, երբ պրոֆեսիոնալ բեմարուեստը նոր էր զարգանում Օսմանեան կայսրութիւնում: Սակայն Թօլայեանը հարկ է համարել մանրամասն ներկայացնել նաեւ թուրքական ժողովրդական թատերական հին ձեւերը (անգիր պիէսներ խաղալու արուեստը՝ յայտնի թիւլլամթ եւ օրթաօյինի անուններով): Յայտնի փաստ է, որ հայերը, յատկապէս հայուհիները, թուրքերէնի իրենց ոչ կատարեալ առողանութեամբ հանդերձ, եղան թատերարուեստի ռահվիրաներ՝ յետագայում գիջելով իրենց դիրքը թուրք գործիչներին: Սոյն հատորը տալիս է այս քաջ յայտնի իրողութեան երեւոյթի ամբողջական պատկերը՝ պատմամշակութային ողջ ենթատեքստով հանդերձ: Բեմագրիչ Յակոբ Վարդուկեանը, որը, ըստ Թօլայեանի, այդ «չատ գործնականամիտ մարդը», «տեսնելով, որ հայերէն ներկայացումները նիւթապէս օգուտ մը չունէին եւ շահ ապահովելէ աւելի յարատեւ գոհողութիւն կը պահանջէին, առաջին անգամ թուրք թատրոնի մը մենաշնորհը ստանալու գաղափարը յղացած էր՝ հիմնելու հա-